

## ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷԶ \*)

ՐՕԶԵԳԵՐԻ

Տասնումէկերորդ կիրակի

Են, սիրելիս, ոչինչ օգնել չի կարելի։ Իմ այս նամակից էլ օդրկօօնի հոտ չի դալ։ Մարտի կէսն է, դարունը զեռ հեռու է և ստիպուած եմ դարձեալ վարախն առանձնանալ և այնպէս դրել քեզ։

Անցեալ շաբաթուալ օրերին մի անգամ երիտասարդ Ռոխերլի հետ միասին նկուղում նստած բուրդ էինք զգում, որը աշնան վերցրել էին ոչխարներից։ Ոչխարից մինչեւ ջուլհակի դորձիքը նոյնքան հեռու է, որքան հասարակ կտորից՝ բանկային տոմսակից։ Այս գործը առանձին գիտութիւն և վարժողութիւն է պահանջում։ Սակայն բուրդը դդել երեխան էլ կարող է։ Միմիայն ես, որ առաջ քան ալսպիսի տարօրինակ կերպով երեխայի փոխուելու, արդէն տղամարդ էի դառել, պէտք է վարժուելի դորանում։ Նկատելով, որ թելերը հատհատ վերցնում և մասմաս եմ անում, Ռոխերլը ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է անել։ Նրա համար էլ ծանր է այս աշխատանքը, որովհետև մէկ ծեռքով է դորձում։ Նայում եմ այս գեղեցիկ երիտասարդին, որ գուցէ իր ամբողջ կեանքում դատապարտուած է թերանդամ Թալու և հարցնում, թէ ինչպէս պատահեց այդ դժբաղտութիւնը նրան։

Նա բարձրացրեց վրաս խոշոր, ճղճիմ, երբեմ առանձնայատուկ կերպով փայլող աչքերը և ասաց։

—Վայրի այծն է մեղաւոր։

Թետոյ յանկարծ ծիծաղեց և շարունակեց։

—Վայրի այժր։ Վայրի՞ ալծ ասացի։ Տեսնում ես, չանցել, ինչ վասն եմ. ինչով է վայրի այժր մեղաւոր, որ ես ուզեցալ հրացան արձակել։

— Ճշմարիտ է, հեն պատմութիւն է ալդ։ Գիւղացին պէտք  
է իր արտերը պաշտպանէ վայրի կենդանիներից։ և մինչդեռ  
խեղն մարդը պահպանում է իր ունեցածը, անիծեալ որսորդը  
գնդականարում է վայրենի ալժին, բայց գնդակը վրիպում է և  
վիրաւորում գիւղացուն։

— Ոչ, Հանզել, այս դէպքում ալդպէս չեր։ Տեղն էր ինձ։  
Վայրենի ալճը ծմեռը ոչ ցորեն է ուտում և ոչ խոտ։ Հենց ան-  
պէս ուղեցալ արծակել։ Իսկ երբ մի բանի ցանկութիւն եմ  
զգում, ոչ մի բան չի կարող լիս կասեցնել ինձ... Երբեմն  
ամբողջ կէս գիշեր սպասում էի վերև հրացանը ծեռիս։ Բայց  
վիճակուած չէր ինձ... մի անգամ հրացանը վրիպեց։ մի այլ  
անգամ երբ նշան դրի, կրակելու ծայն լսուեց, միայն ոչ իմ հր-  
րացանի։ Որսորդն էր արծակել, գնդակը կպաւ ծեռիս և  
մինչև ալսօր էլ դեռ մնում է մշջը։ Նոյնիսկ չ'կարողացայ մտա-  
ծել, որ գնդականարել են ինձ։ Երբ ուշի եկայ, քահանան կանդ-  
նած էր մօտ և խօսում էր մահուան մասին։ Թող ինչ ուզում  
է լինի, մտածեցի ես, և կրկին քնեցի։ Բայց գնդակը չթողեց  
երկար քնելու...։

— Նեղացնում էր։

— Ի հարկէ նեղացնում էր։

— Ո՞վ կրակեց քեզ վրայ։

— Անիծեալ Կոնդադ որսորդը։

— Հախն էր քեզ։

— Ի հարկէ հախն էր։ Որովհետեւ որսի վրայ էի ար-  
ծակում, իսկ այդ արգելուած է։ Սակայն որսորդն էլ իրաւունք  
չունէր մարդ գնդականարելու։ Նա կարող էր հրացանս խլել։  
Եթէ հակառակէի, կարող էր խփել ինձ։ Բայց ո՞չ։ Այս գըն-  
դակը մարդասպանի գնդակ էր։ Նա թշնամի է ինձ։ Ասում  
են որ կարող եմ գանդատուել։ Բայց ի՞նչ օդուտ եթէ նրան  
բանտարկեն։ Ձեռքքը դրանով չի առողջանայ։ Նա աւելի թանկ  
արժէ, սիրելիս։

Աղդ վայրկենին կ'վախենայիր նրանից։ Ուղեցալ հանգս-  
տացնել նրան։

— Իսկ որսորդը վախեցաւ, — շարունակեց Ռոխերլը։ Նոյն

օրը եկել էր առողջութիւնս հարցնելու։ Ասում էր, թէ ուզում էր միայն հրացանը ծեռիցը վայր գցել տալ. իսկ ինձ բոլորովին պատահմամբ էր դիպել։ Ես չեմ էլ բարկանում քեզ վրայ, ասացի։ Գուցէ երբեկցէ փոխարէնը կհատուցանեմ քեզ։

— Ես քո տեղը լինէի՞ աւելի տկար ծեռքի մասին կմտածէի, քան որսորդի։

— Զեռքը կառողջանայ։ Զիւթը գնդակը դուրս կքաշի։

Որքան ցաւում եմ երիտասարդի վրայ, Զէ որ նոր է սկսում կեանք մտնել. Ի՞նչպէս պէտք է աշխատի, և պաշտպանուի։ Բայց նա վստահութեամբ է նայում իր մշուշապատ ախուր ապադային։

— Ռոխերլ, ասի ես, — Զեռք կառողջանայ։ Բայց ծիւթը չի օդնի. բժիշկ է հարկաւոր քեզ։

— Արդէն հարցը ել ենք Մարենցելին, որը զանազան դեղեր է պատրաստում։ Նա ասաց որ բժշկի չղիմենք։ Բժիշկը անմիշապէս ծեռքը կանդամահատի։ Աւելի լաւ է փչացած ծեռքը մնայ։ Իսկ գնդակը դուրս կդայ։ Լիորուսինը պէտք է երեք անգամ լուսաւ որի նրան։

Այժմ հասկացայ, թէ ինչու երեք շաբաթ առաջ իրիկնադէմին տղան կանդնած էր դրան առաջ և զժբաղդ ծեռքը դէմ անում ծագող լուսնին։

— Գուցէ այսպէս աւելի լաւ է։ Զէիր կարող քեզ զսպել, տեղն է քեզ։

— Իսկ կու չես խղճում խեղճ անասունին։ Զէ որ նա կեանք քեզանից պակաս չէ սիրում։

— Բայց որսորդը մտաժնում է դորա մասին։ Եւ ժամանակ էլ չկայ մտածելու, այլապէս կենդանին կփախչի. կամ թէ, միւնցն է, մի ուրիշը կսպանի նրան։

— Թօղ, Ռոխերլ, միայն գողին է լատուկ այդպիսի պատճառաբանութիւնը։

— Ճշմարիտ է, բայց աշխարհի երեսին որսորդութիւնից աւելի զուարծալի բան չկայ։

Եւ միւնոյն տղան մարմացած հողացողութիւն է ներկայացնում ընտանի կենդանիներին վերաբերեալ։ Ամեն հաշից լետ, պատճանանից վշրանքներ է ածում ճնճղուկներին ձմեռուայ *թէր!*

Կովկասի մասին, ճիշտ է, Բարբելն է հոգում. իսկ որտեղ նա է, ուրիշ ոչ ոք պէտք էլ չէ; Անցած օրը մեզ մօտ փոթորիկ էր, Գիշեր էր: Ինձ կանչեցին սենեակը, որ օգնեմ աղօթքի մէջ և եթէ կայծակը խփէ, պատրաստ լինեմ: Ամպը գոռում էր ահոելի կերպով: Ռոխերլը շապկանց կպել էր վառարանին, դողում էր, լաց լինում, ականջները ծածկում ու օրոշը կանչում: Բարբելին արթնացրին և երբ նա եկաւ, Ռոխերլը բոլորպին հանգստացաւ: Աղջիկը չէր աղօթում, ոչինչ չէր ասում, այլ միայն մտախոհ կերպով դուրս նայում: Շուտով փոթորիկը անցաւ և առեն ինչ հանդարտուեց: Կարծես աղջիկը հանգստացրեց բնութիւնը:

Դարձեալ նրա մասին եմ խօսում:— Բայց չէ՞ որ լիմարութիւն է այս:

ԹՈ ՀԱՅՏԱՐԻՒ ՎԱՐՉՈՒՐ:

Ցաւսեւերկուերորդ կիրակի

Զգայուն և ցնծացող մարդիկ կասէին, որ համարնակիչներս բարքի վեհանձնութեան և սիրելի բարեծեռութեան տէր մարդիկ են: Ես ուղղակի կասեմ, որ ասենաբարի մարդիկ են:

Բայցի ընտանիքի փոքր ինչ խիստ մօրից, ամենքն էլ հեզութեամբ և ուշադրութեամբ են վերաբերում դէպ իրար: Երբ հօր շնչարդելութիւնը սկսւում է, բոլորեքեան էլ աշխատում են թեթևացնել նրա ցաւերը, թէպէտե կիւտախոտի մի քանի փշրանքն աւելի ուժեղ է լինում, քան շրջապատողների ամբողջ սէրը:

Բայց երբ Մարենցելը, ինչպէս օրինակ այժմ, խոտ չի բերում, ամենքն էլ յուսահատութեան մէջ են լինում: Պառաւը, ինչպէս երեւում է, նեղացել է. բայց ինչի՞ց: Արդեօք նրան համար, որ մայրը արգանակը նրա համար նստարանի վրայ պատրաստեց և ոչ սեղանի: Կամ թէ որ միանցելը նրա խրդաշունը Շշունք անուանեց: Սակայն խոտը սպառուել էր և Ռոխերլին ուղարկեցին պառաւին որոնելու: Նա գտու պառաւին հովտում, ուր իր զեղին խրդաշան հեա միասին, որին միշտ փոքրիկ կողովի մէջ հետը ման էր ածում, ողորմութիւն էր հաւաքում: Ռոխերլը ճնողների կողմից հրաւիրեց նրան մօր ձեռքով

պատրաստած թարմ կարագը ճաշակելու։

— Բարի, ասաց պառաւը — եթէ բարի նպատակով են խնդրում, չեմ փախչի։ Եւ Թոխերլի հետ միասին բարձրացաւ սարք։ Սենեակը մտնելով, նա վերցրեց իր լախեղը զլսարկը և կժու հարցրեց։

— Որտե՞ղ կհրամայէք նստեմ։

— Ինչտեղ կամենաս, ինչտեղ կամենաս, Մարենցել, ասաց մայրը — կատարեալ դժբաղդութիւն է մեղ պատահել. ծերուկի կուրծքը շարունակ ցաւում է։

— Ահա թէ ինչ Գարնանը այդպիս է լինում, Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել։

Իսկ խոտի մասին ոչ մի խօսք։

Երբ Մարենցելը կերակրեց իր շանը, և ինքն էլ կերաւ կարագով հացը, մայրը կիւսախոտ խնդրեց նրանից։

Մարենցելը վիզը երկարացրեց, աչքերը չուց, ձեռքերը դողացին։

— Կարձում եմ կարագով հիւրասիրելու համար չէ որ հրաւիրում էք խեղճ մարդուն, այլ կիւսախոտ ստանալու համար նրանից։ Աւելի լաւ կինէր սկզբից ասէիք։ Հետո խոտ չունիմ։

Ես վճռեցի մի նոր դաս առաջ ուսուաւին։

— Տիրուհի, ասացի ես այնպիսի տեսք ընդունելով իբր թէ ամենկին ուշադրութիւն չեմ դարձնում Մարենցելի վրայ, — երբ հօր շնչարգելութիւնը կրկին սկսուի, ես լաւ դեղ գիտեմ դրա դէմ. պէտք է վերցնել դեղին խլրդաշան ճարպը։ Մրաի ցաւի համար աւելի լաւ միշոց չկայ։ Պէտք չէ մեղ հոտած կիւսախոտը։

Պառաւ Մարենցելը նայեց ինձ այնպիսի ատելութեամբ, որ դժուար է նկարագրել և սկսեց քրքրել կողովք։ Երևաց մեծ քանակութեամբ կիւսախոտ, վէրքերի համար ծիւթ և այլ բաներ։

Երբ նա գնաց և հայրը ծուխը ներշնչեց, ես այնուամենայնիւ նկատողութիւն սաացայ։ Աղամն ասաց, որ թշլ չի տայ իր տանը ծաղըել առողջարար միջոցները։ Պէտք է գոհ լինել Աստծուց, որ այսպիսի խոտեր է ստեղծել։ Իսկ շանը ինչո՞ւ վի-

բաւորել: Թող խեղնը միսիթարուի նրանով: Դեռ լաւ է որ մինչև այժմ սիրում է նրան:

Բացի տկար որդուց, ծերունիներին խիստ անհանգստացնում է և հեռաւոր զինուոր Վալենտինը: Վաղուց սպասում են նրա արձակուրդին: Ծննդեան ուղարկել էր իր լուսանկարը: Ռոխերլը կախեց այն պատից սրբիրի շարքում, բայց ծերը ցած բերեց:

— Առանց այդ էլ աղօթքի ժամանակ շատ ես մտածում աղայի համար. պատկերին նայելով աւելի շատ կմտածես:

Ընդհանուրի պարձանք է փոքրիկ ֆրանցելի: Ուսուցիչը շատ է գովում նրան: Միւս տարի ծերերը կուզենային հոգեւոր դպրոց ուղարկել նրան: Հոգեւորականների և մոլեգանդ քահանաների մեծ մասը գիւղական դասակարգից են առաջ գալիս: Նրանց մէջ է գտնուած դեռևս երկրագնդի անձեռնմխելի ոյժը և նրանք էլ նոյն ազդեցութիւնն ունին պատմութեան վրայ, ինչ որ ուրիշ երկ շյթները: Մերունիներիս ամենանուիրական ցանկութիւնն է, խորը ծերութեան հասակում ներկայ լինել իրանց որդու ժամերգութեան:

Բայց ամենաթանկագինը, նրանց աչքի լցոսը Բարբեն է, թէպէտև դորա մասին բոլորովին բան չեն ասում: Եթէ նա բացակայ է, ամենքը հարցնում են նրան, եթէ փայտ է կոտրտում, բոլորն էլ անհանգստանում են, ծանր չէ արդեօք այդ աշխատանքը նրա համար. եթէ ճաշի ժամանակ գդալը ցած է դնում, լուզուած հարցնում են, ինչո՞ւ չես ուտում, զաւակօ: Գիշերները հօ չես մրսում, Բարբել: Ոչ մի տեղո՞ւ հօ չէ ցաւում, Բարբել:

Մի անգամ, երբ աղջիկը տանը չէր, ակամայ ունկնդիր և դայ Աղամի և կնոջ խօսակցութեան:

— Միրտս անհանգիստ է.

— Ինչի՞, կնիկ:

— Ինքս էլ չգիտեմ թէ ինչու:

— Եթէ ծանր ես զգում քեզ, խորհուրդ եմ տալիս մի փոքր փնթփնթալ և ամեն ինչ կանցնի...

— Կատակ մի անի, ծերուիր հանաքների սիրտ չունիմ:

ՄԵՐԾԵ չես նկատում, Աղամ, որ այժմ նա միշտ տխուր է:

— Ո՞վ:

— Բարբելը, և ամենեին չի ծիծաղում:

— Բարբելը! Զի՞ ծիծաղում! Դիտես այժմ ես էլ այդպէս եմ կարծում: Յիշո՞ւմ ես, առաջ նրան տան զանգակ էինք առնուանում:

— Այժմ այն չէ, և վաղուց արդէն այն չէ: Զեմ էլլիշում թէ երբ էր ծիծաղում: Զուրը ընկնելու օրից բոլորովին փոխուեց:

— Ինչի՞ց կինի արդեօք:

— Յանկարծ եթէ մի բան պատահած լինի: Ո՞հ, երինային թագուհի, մտածելն անդամ զարհուրելի է:

— Երևի ծեռքից կինի:

— Ձեռքից: Նրա ծեռքերը առողջ են:

— Ոչ, Ռոխերլի ծեռքի պատճառովի:

— Բայց ինքը, Ռոխերլը, չի գանգատուում:

— Կարծում ես շատ ուրախ է: Էն, մօրը այդպիսի բան մի ասի. թէ որ կարելի լինէր բոլոր որդոց տանշանքները իր վրայ վերցնել, ո՞րպիսի ուրախութեամբ կստանձնէր մայրը:

Ճաշի ժամանակ հօդենդորֆից վերտպարձան տան միւս անդամները և հետները Վալենտինից նամակ բերին: Նա պառկտծ է Լայրախի հիւանդանոցում: Զի զրում թէ ինչ է պատահել: Գրում է միայն իւրայինների, իրանց տան մասին: Առաջնը լաց եղաւ նրանցելը, յետոյ Ռոխերլը: Մայրը անշարժ նստած էր վառարանի մօտ: Բարբելը ծեռները գոզնոցի վրայ դարսած, իր խոշոր տխուր աչքերով նայում էր պատուհանից:

Սկսում եմ միշիթարել:

— Հիւանդանոց, տեսէք թէ ինչ է պատահել: Ես երկու անդամ եմ հիւանդանոց եղել. մի անդամ չորս, իսկ միւս անդամ վեց շաբաթ պառկեցի: Ամեն ինչ կայ այնտեղ, միայն մի քիչ տկար ես զգում քեզ: Տաք անկողին են տալիս, միս, բժիշկը այցելում է: Իբրև իշխանի են քեզ ծառայում: Ոչ աշխատել է հարկաւոր, ոչ վալժութիւնների պէտք է գնաս, ոչ պատժում ես, ոչ հայնոյանքներ լառմ, և ժամանակը անցնում է այսպէս: Երբեմն մինչեւ անդամ հիւանդանոցում ուրախ էլ է

լինում: Խօսում են, թուղթ են խաղում, հանաքներ անում, ծիծաղում: Կան հիւանդներ, որոնք առողջանալու վրայ չեն ուրախանում:

Այս անդամ, սիրելի փիլիսոփայ, հարալ վաստակեցի արգա-նակը: Ամենքի դէմքերն էլ պարզուեցան:

—Փող չի՞ ուզել, —հարցը եց մայրը:

Նամակը կարդում էր Ռոխերլը և հօր ակնարկի համա-ձայն նամակի վերջին տողի վերաբերմամբ լուռ մնաց:

—Նա զեռ ոչ մի անգամ փող չի ուզել, —ասաց մայրը:

Իսկ նամակի վերջին տողում գրած էր «անգին ծնողներ, ինչը ունեցած եմ ուղարկեք ինձ միմայն երկու դուլդէն»:

Մերը ուզում էր տուշչ որդոց հետ խորհրդակցել և լեռյ այնպէս ասել մօրը:

Նախընթաց օրը իմ ներկայութեամբ երեք անգամ եկել են հարկի համար: Հարկահանը ինչոր հին պարտք էր պահանջում: Ստիպուած եղան վերջին կոպէկները տալ նրան: Նա գնաց ա-սելով, որ եթէ մինչև զատիկ ամբողջ պարտքը չվճարուի, պարտքի մէջ կվերցնի նրանց երկու եղք: Հարկահանի այցելու-թիւնից լետոյ Աղամի շնչարդելու թիւնն սկսուեց: Իսկ զինուոր որդու նամակը ուղարկի խոցեց նրա սիրտը:

Բայց նկատեցի, որ Բարբելի դէմքը փայլում է.

—Փող չի՞ հարկաւոր Վայենատինին, հարցը եց նա:

—Զինուորները միշտ փողի կարիք ունեն, —պատասխանեց

հայրը:

Մի քանի ըստէից լետոյ աղջիկը իր սենհակից դուրս թե-րեց գցյնդդյոյն թելերով կտրած մի քսակ և հանեց նրանից ու-թը թէ տասը թղթէ դուլդէններ:

—Բարբել, նրտեղից է այսքան փողը, բացականչեց մայրը վախեցած:

—Մոռացէլ էք, որ մօրաքըրս իր կտրողութիւնը ինձ է կտակել: Ախ, Աստուած, որքան գեղեցիկ է նրա խիստ դէմքը խորամանկութեամբ ժպտալու ժամանակ:

—Բայց չէ որ մօրաքըրոշիցդ մնացած փողերը ուզում էիր կայլինի ինայողական գանձարանը տանձարանը տանել:

—Ինչ հարկաւոր է գանձարանը, երբ տանն էլ կարելի է պահել:

Ես նայեցի հանած թղթերին և սարսռացի: Բոլորն էլ արդէն երկու տարի առաջ գործածութիւնից դուրս եկած թրդթեր էին:

Իսկ նրանք ուզում են Վալենտինին ուղարկել: Ախ, Ադամ, Աղամ: Երբեմնակի լրագիր կարդալը վատ չէր լինի:

Այժմ խնդրում եմ քեզ, բարեկանս, պատասխանես հետեւեալ հարցերին: Ձեռք սրախիդ դրած ասա ինձ՝ քաջութիւն կունենալիք դու հասկացնել այս արարածին, որ այնքան ժամանակ ինայողութեամբ քսակի մէջ պահուած դրամները ոչ այլ ինչ են, բայց եթէ հասարակ, բոլորովին անպէտք թղթեր: Այս վարմունքը աւազակի մեծ ճանապարհին փող յափշտակելու պէս բան կիմէր:

### Մօտեցայ սեղանին:

—Լսիր, Բարբել,—ասացի ես,—տուր այստեղ տեսնեմ: Քո ունեցածը ութք գուղէն է, Պոստատանը այդ փողերը չեն ընդունում: Այժմ դրամը փոխադրում են և պէտք է արծաթի դրամ վճարել: Այս, աղջիկ, դեռ չդիտես թէ ինչպէս կամակոր է երբեմն փոխար: Բայց դժուար չէ գործին օգնել: Տուր ես փոխեմ քո թղթէ դրամները արծաթի, ինձ աւելի յարմար է թղթէ դրամներ ունենալը...

Կեղծեցի, բայց յշո ունիմ, որ այս կեղծիքի համար Աստուած թողութիւն կտայ իմ քաղաքի երեքհարիւր մեղքերի և կեղծիքների համար: Մի անգամ ասացիր, որ բարի մարդկանց հետ յարաբերութիւն ունենալը վարակիչ է: Համաձայն եմ քեզ հետ:

Դրամը ուղարկուեց նամակով, որտեղ գրուած էր, որ տանը ամեն ինչ առաջուայ պէս է, որ ծնողները, եղբայրները և քոյրը առողջ են, որ բոլորեքեան էլ աղօթում են Վալենտինի և նրա վերաբարձի համար: Վիրաւոր ձեռքի մասին ոչ մի խօսք:

Երբ նամակը գրուեց և բարձրածայն կարդացուեց, Բարբելը նայեց ինձ: Կարողացաւ արդեօք արտայայտել այն, ինչ նրա մտքումն էր: Աստուած իմ, մինչև այժմ ոչ ոք այդպէս

լաւ չէ նայել ինձ; Ակսօր մեղ մօտ դարնան սկիզբն է... գարուն, դարուն, դիտնական:

«Կօնտինետալ փոստ»-ի խմբագրութեան:

Տասնեւերեքնորդ կիրակի

Փաստով ինձ ուղարկած Ձեր ժաղանքները ոչ մի տպաւորութիւն չեն գործում այլևս ինձ վրայ, Զափազանց գոեհկացել եմ դոցա համար: Ներեցէք ինձ, որ հանաքը իրողութեան փոխուեցաւ: Սկսում եմ հասկանալ, թէ ինչ է նշանակում կեանքը և սեպհական քրտինքով ապրելլ:

Լրագիրը անհրաժեշտութիւն լինելուց դադարեց ինձ համար: Եթէ ցանկութիւն ունիք այսուհետև էլ առաքել ինձ, ուղարկեցէք պարոն Գուիդո Վենտերին, Կայլինդի մօտի չօլզենդորֆի դպրոցի ուսուցչին: Մեղ մօտ լրագիրը չեն կարողանում տանել, որովհետև այրելու ժամանակ չափից դուրս կատ հոտ է արձակում, ինչպէս ասում է մէկ լարգելի անձնաւորութիւն:

Այժմ այստեղ գետնից սկսում է հողի հոտ գալ, որը ինձ տպադրական թանաքի, կնդրուկի և վառօղի ծուխից լեաց առասպելական է թւում:

Իմ մասին անհանդիսա մի լինէք. տարուայ վերջին կրստանաք այցելութեան քարտս: Վերջացնում եմ:

ՀԱՅ ՑՐԱՒՑՆՈՒՐՔԵՐ

Տասնեւըսերորդ կիրակի

Անցեալ կիրակի լաշողեցայ գրել միմիայն «Կօնտինենտալ փոստ»-ի ձեռնարկողներին: Զանժրացրին ինձ նրանց թեթևամիտ սրախօսութիւնները: Կար ժամանակ, որ ես էլ նրանց նրման մի բան էի:

Նախորդ կիրակի օրուայ մեծ մասը անցրի մի հին գիրք կարդարով, որը գտայ որդնակեր սնդուկի մէջ: Մի ձեր ամուրի մարդու երկրի և նրա պատմութեան նկարագրութիւն է: Սորանով ժանօթացայ նախահայրերիս հետ, որոնցից մէկին հօգենշտառութէնների ժամանակ, Առւզսրուրգում չորս մաս են

արելու Մտածել են, արդեօք, մի վայրկեան նախահայրերս, որոնք արջի միս էին ուտում, որ կոսյ ժամանակ, երբ նրանց լաշորդները սիսեռի շրալի ապուր կուտեն:

Խսկապէս ասած, դեռ ոչ մի անգամ չէի փորձել, թէ ինչ ասել է պաս բոնելը և երբէք չեմ էլ մտածել դորա մասին, թէպէտե ամեն օրացոյցի մէջ նշանակած կայ քառասանօրենայ պատր: Այժմ արդէն սահպուած էի պաս պահելու Առաջ ամեն օր միսեռի արդանակ էին տալիս, իսկ այժմ շրալի կերակուրներ, պասուայ միակ համեմունք՝ սոխով: Բարեսիրտ Աղամ: Եթէ պաս օրերին մտնէր բարձրաստիճան հողեորսկանների խոհանոցը:

Այնքան լզարել եմ, որ Բարբելը արդէն բանկոնս նեղացրել է. սակայն ես ամենեին ոյժի սպառումն կամ ինքնաղդացողութեան թուլութիւն չեմ զգում: Զէ՞ որ քաղաքումն էլ են գովում չափաւորութիւնը, լաւ. օդը և մարմնական աշխատանքը, Բայց այնտեղ միայն ասում են, բայց չեն կատարում: Մատներիս կոշտերը վաղուց արդէն դադարել են ցաւելուց: Քաղաքի կոշիկների փոխարէն հաղնում եմ վալենտինի երկար կոշիկները, որը մեծ չլինելու համար լցնում եմ դարմանով: Մնացեալ հագուստներն էլ տալիս են: Իմ զգեստս պահում եմ, լուսարով նրանով կրկին ձեր մէջ երևալ:

Մի քանի օր առաջ, սիրելի գիտնական, պատիւ ունեցայ վերշապէս քերել աղրի կոյար: Աղրը սահնակներով տանում ենք դաշտ: Գիւղում ծիւնը երթևեկութեանը ամենենեին չի խանդարու մ. աւելի շուտ թեթևացնում է այդ: Սկզբում բաւական քաշում էի այդ աշխատանքից: Ոչինչ բան այնպէս ահ չէր ներշնչում ինձ, որքան գաւթի աղբակշյոր: Սակայն ոչ մէկը չի դորշում նրանից: Երբ առաջին անգամ պէտք է աղրի մէջ եղանը իշեցնէի, նշյն զդացմունքը ունեցայ, երեսի, ինչ որ զինուորը առաջին անգամ կրտկի մէջ դնալիս: Զի կարելի հերքել, որ աղրի կոյարը ուժեղ հոտ ունի, կարելի է ասել, նոյնիսկ, կծուհոտ ունի: Թէպէտ քաղաքում աւելի վատ բուրմունքներ էլ են լինում: Գիտես այդ հոտը ինչ լիշեցրեց ինձ: Ճաշկերոյթից լետոյ նուրբ պանիրները: Ցանտէրո ժագտում է հողի չաղ շերտե-

ըլ դիտելիս, որից դրորշի է բարձրանում: Եթէ լաւ եղանակ լինի, հայը կը ծլի: Սկզբում աղքի սև կոյտերը կէտերի նման են երեսում դաշտի վրայ: Գալիս է Բարձրելը ու եղանով շաղ տալիս պարարտութիւնը: Հին բանաստեղծները կտսէին՝ ծաղիկներ է սփռում: Ինձ թւում է թէ պտուղներ է ցանում: Բայց այդ մենք օդոսասին կտեսնենք:

Բարի Աղամը մտախոհութեամբ նայում է, թէ ինչպէս են դաշտը պարարտացնում և ցածր ասում: Թող Տիրոջ կամքը լինի:

Այս բառերը հրաշքների աշխարհում ապրող ամեն մի գիւղացու բերանին պատրաստ է: Տարին երեքնարիւր վաթսուն և հինգ օր ունի. սակայն ինչե՞ր չեն կատարւում այդ ժամանակամիջոցին: Երբեմն բոլորովին անհաւատալի բաներ են տեղի ունենում: Գիշերը տասնեւթեց ժամ է տեսում: իսկ մի քանի ամսից յետոյ ցերեկն է տասնեւթեց ժամ տեսում: Եւ այդ գիշերու այ և այդպիսի ցերեկուայ ժամանակամիջոցում զարգան մ են սաղմերը, առն ինչ ծաղկում է, շքեղ հասունանում, յետոյ թառամում և չորանում մահուան դրկում: Ի՞նչ երկար ժամանակ տեսնում ենք գեղեցիկ կանաչը, որքան ժամանակ սպասում ենք պաղի և այս ամենը կատարւում է կարճատետարուայ ժամանակամիջոցին:

Այժմ երեկոները լսելի են լինում թէ ինչպէս աղմուկով են թափիւում ծիւնի հիւսքերը: Բարձր սարերին ձեան շերտի տակ հաւաքւում են ջրերը և պղտոր առուակներով ցած թափիւում, տանելով իր հետ ծիւնը և սառոցյը: Սարելը պարզ և որոշակի նկատելի են խորաւ օդի միջից և նրանց գաղաթներին տաք քամի է փչում: Հովիտներում խոար երեկի արդէն կանաչել է... իսկ ծեղ մօտ սկսուել են նուազահանդէսները, որտեղ կանայք հովիալներով ժածկում են իրանց ծանծրացող դէմքերը: Ալղեպանները մաքրում և կտրատում են ծառատառները. քամին քաղաքի փոշին է բարձրացնում: դերձակները մի որեւ նոր լիմար ծեկ գարնանային դգեստներ են պատրաստում... լիմարութիւնը ոչ մի տեղ այնքան լիմար չի թւում, որքան սրտին մօտիկ բնութեան մէջ:

Տասնեւհինգերորդ կիրակի

Անցած կիրակի մօր և հօր միշե վէճ ժաղեց:

Ասում են թէ շատ սակաւէ պատահում ալդ. որովհետեւ, ինչպէս Ռոխերլն է ասում, ոմայրը այն է անում ինչ որ հայրն է ուզում և հայրը նոյնպէս է վարւում ինչպէս նայրն է ցանկանում: Թէպէտ այս անգամ արդարութիւնը մօր կողմն էր, բայց հայրը պնդեց իր ասածի վրայ և, օգտուելով հանդամանքից, լաղթող հանդիսացաւ:

Խոնդիրն ահա թէ ինչում էր: Մեր հարևան Շրադերերի և Կումբոկի հետ միասին հովտից երկու գիւղացիք եկան մեզ մօտ կէս օրին այնպիսի հանդիսաւոր կերպով մտան խրճիթը, որ նոյնիսկ վախեցանք: Ուզում էին Աղամ Վէլլերին Լանդասագի ներկայացուցիչ ընտրել: Կընդունի, արդեօք, այդ առաջարկը. հարցրեց կումբոկը:

Սկզբամ Աղամը բան չէր հասկանում, քիչ լետոյ լրջօրէն հարցրեց:

—Ի՞նչ էք ասում: Լանդտագի ներկայացուցիչը պէտք է լինիմ ես: Բայց ես անպատրաստ եմ այդ գործի համար: Ես ոչինչ չգիտեմ և կայլինդից դուրս ոչ մի տեղ չեմ եղել: Ես չեմ էլ հասկանում թէ մարդիկ աշխարհիս երեսին ինչ են անում: Երեք ծաղրում էք ինձ:

—Հենց այդ պատճառով էլքեղ ենք ընտրում, բացականչեց Շրագերերը: —Նրա համար, որ ուրիշների հետ ոչ մի գործ չունես և աւանդական սովորութիւններին հետևող ես: Հենց դուրա համար էլ հարկաւոր ես մեզ: Մենք չենք ուզում ուղարկել այնպիսի մարդիկի, որոնք քաղաքականութեան մասին խօսել գիտեն, չենք ուզում ուղարկել հարուստ գիւղացի, որ կալուածատէրերի հետ չմիանայ: Մեր ցանկութիւնն է ընտրել տեղացի, ծեր գիւղացուն, որը հին սովորութիւնները և հին տնտեսութիւնը կուղենայ պահպանել: Մեր դաշտերը և մարդագետինները անփոփոխ են մնում: Մենք պէտք է մեր ամառուայ և մեր ձեռուայ համեմատ ապրենք: Մենք գործ չունենք այլ երկրների եղանակների հետ: Աղամ, դու պէտք է ինքդ վարձուորի նման աշխատես, գեղջուկի կարիքները լաւ ես հասկանում և բացի

տնտեսութիւնից ոչնչի մասին չես մտածում։ Ահա թէ ինչի համար ընտրեցինք քեզ, Աղամ։

Աղամը լուռ էր։

—Մանր կլինի քեզ համար, Աղամ, —միշտեց Կուլմբուկը, —որովհետև դու բարի մարդ ես, չափազանց բարի, իսկ լանդտագում պէտք է կալծքարի նման պինդ լինել… քո բացակայութեան ժամանակ տան մասին էլ պէտք է հոգ տանես…

—Հարեւան, կարծես ուզում ես նրա միտքը փոխել։ —Մի մտածի, Աղամ, թէ տան դորձերը չի կարելի մի քանի շաբաթ թողնել։ Ամեն պատգամաւոր որոշ վարձատրութիւն է ստանում։ կարող ես լաւ տնտես վարձել և դեռ մի բան էլ քեզ համար խնայել։ Ամենիս բարիք արած կլինիս, եթէ համաձայնես, Մենք հաւատում ենք քեզ, ամբողջ շրջակայթն ասում է, որ Աղամից լաւը չկայ։ Համաձայնիր, Աղամ։

—Համաձայնիր, Աղամ, Աւելացրեց Կուլմբուկը. բաղմաթիւ ձայներ կստանաս… ամենքին կըորդորեմ…

Այս անգամ Աղամը ծանրութեամբ բարձրացաւ, դարձաւ պատի կողմը և ասաց. —Ես ոչինչ չեմ կարող ասել։

—Ուրեմն համաձայն ես։

—Ո՛չ, սատանան տանի քեզ։

—Կտրականապէս, դեռ վիրաւորւում էլ է։

—Վիրաւորւմ եմ։ Ինչի՞ համար նեղանամ։ Ես պէտք է ուրախ լինիմ։ Բայց ես ուրախ չեմ և կեսնքումս երբէք ուրախանալու էլ չեմ։

Նստեց վառարանի մօտ փայտի կտորի վրայ և սկսեց ծանրը շնչել։

—Աստուած իմ, դարձեալ այս շնչարգելութիւնը։ Երբ տաքանում է միշտ այսպէս է լինում, ասաց պառաւը։ Յետոյ դարձաւ եկողներին։

—Այս ըոպէիս հօ չէ հարկաւոր սրա համաձայնութիւնը։ Մի երկու օր ժամանակ տուէք։ Թող մտածի։ Ալնալէս չէ, ծերուկ, կմտածես։

Բայց ծերունին ոչինչ չէր լսում և ծանր շնչում էր գիւ-

դացիները գնացին, խոստանալով երկու. օրից վերադառնալ:

Երբ ծուխը ներշնչելուց յետոյ շնչարգելութիւնը անցաւ, մայրը սկսեց նախապատրաստել նրան:

— Այսպիսի առաջարկից հրաժարուելու համար փալասի կտոր պէտք է լինել, ասաց նա:

— Ի հարկէ լաւ կլինէր եթէ համաձայնուէի: Հօ չես կարող, երբ շնչարգելութիւնս սկսուի, շարունակ ծխով կողքիս կանգնած լինել:

— Ասենք լուզուելու անքան բան էլ չես ունենայ: Ինչպէս ասում են, շատերը ամբողջ շարաթներով նստած են լինում համբերի նման...

— Ինչպէս չէ, հանդիսան նստած կլինես, երբ այն ամենը՝ ինչ որխօսում, են քո սրտովը չլինի: Միշտ նոր-նոր բաներ են հնարում, որից մենք, գիւղացիներս, քտնդուում ենք: Առողջն էլ չի ուղենայ խօսել,

— Ուրեմն նստիր քեզ համար, դրամը միենոյն է կվճորեն: Նա խիստ և սուր հայեացքով նայեց կնոշը:

Իսկ պառաւը ասաց աւելի մեղմ:

— Ով զաւակներ ունի, չպէտք է արհամարհէ դրամը, թաթի այս օգտակար կապեր էլ կարելի է հաստատել: Մտածիր, չէր կարելի արդեօք Լանդտադում Վալենտինի համար մի բան սարքել. ինչպէս և Ֆրանցելի համար: Յաւիտեան այստեղ մնալու հօ չէ:

— Սակայն ուր պիտի գնայ: Մենք հնուց արդէն ալստեղ ենք ալլում:

— Բայց մի այլ տեղ կարող է նրա համար աւելի լաւ լինել:

— Նա պէտք է մնայ այստեղ՝ բացականչեց Աղտմք. իսկ դու դադարիր լիմար խօսքեր ասելուց: Չեմ ուզում թող տող, որ իմ անձնական շահի համար ընտրեն ինձ:

— Այս Աստուած: Ուրիշները կերթան իրանց շահերի համար: Այդ պատճառով էլ նստած են Լանդտագում:

— Խօսքերս մի խեղաթիւրի, կնիկ: Այլբան է գլաստկարդի օգուտը փնտրել և այլ՝ անձնականը: Ճշմարիտ չէ:

Յուղմունքից տմբողջովին դողում էր. սկսեց առաջուաւ-  
նից աւելի շնչասպառ լինել:

Մայրը հանդարտ ինչ որ շինում էր վառարանի մօտ: Երբ  
ծերունուն ծուխը մօտեցրին, նա երկար ժամանակ չէր կարո-  
ղանում շնչել: Ճակատի զղերը սարսափելի ուռել էին,  
շրմունքները դողում և աչքերը չուել էր:

— Տէր թիսուս: Ռոխերլ, կանչեց պառաւը: Տղան երկիւ-  
ղից վերցրեց մոմը և սկսեց վառել Բարբելը վաղեց շրհորը և  
չուր տուեց խմելու անդադար կրկնելով՝ հայր, հայր, հայր! Ծե-  
րը շօշափեց աղջկայ ծեռքը և սեղմեց. ո՞հ, զաւակս: Աննկա-  
րագրելի թախմութեամբ նայում էր դստեր և նրա աչքերի  
թերթերունքներից արտասութիւն կաթիլներ էին կախուած:

— Դու, դու իմ սիրելի զաւակն ես, ասաց նա վեր.  
չապէս, խորը շունչ քաշելով: Նա թեթևութիւն դդաց:

Այդ ժամանակից սկսած մայրը Լանդտադի ընտրութիւն-  
ների մասին այլևս ոչինչ չէր խօսում: Երկու օրից յետոյ եկաւ-  
կումբօկը: Պառաւը խորհուրդ տուեց նոյնիսկ չսկսել այդ խօ-  
սակցութիւնը: Կուլմբօկը հապարտութեամբ հեռացաւ, յուսա-  
լով, թէ Աղամը իր ծայնը հարևանին կտայ, եթէ իհարկէ նը-  
րանցից մէկին ընարելիս լինեն:

— Յիշում ես արդեօք ծաղկազարդի մասին մեր զպրոցական  
ժամանակներից: Թէ ինչպէս Տէրը արմաւենու ճիւղը ծեռին,  
աւանակի վրայ նստած մտաւ Երուսաղէմ: Ալսօր մի մեծ փունչ  
ուռենու ճիւղերից ծեռքս հօղենդորֆ եկայ: Սա այստեղ ծաղ-  
կազաղի էշ լինել է նշանակում: Ամեն տանից ժողովուեցին մի  
մի երիտասարդ ճիւղերը ծեռին և քահանան այդ ճիւղերը օրհ-  
նում էր եկեղեցում: Ժամերգութիւնը խորհրդաւոր կերպով  
ներկայացնում է կատարանի մէջ ասածները: Այս տեսակ պարա-  
գաներին մարդու սիրտը բարեպաշտութեան նման մի բան է  
ներս սպրդում: Մի անդամ ասել ես, որ եօթանսսուն տարի  
ապրելուց յետոյ, մարդը սովորում է Ասածուն ճանաչել: Իսկ  
գիւղական վարձուորը աւելի շուտ է հասկանում նրան, հաւատաց-  
նում եմ քեզ. քաղաքի եկեղեցիներում ես բոլորովին անտար-  
բեր եմ մնում, գիւղական եկեղեցում երկար կանդնել էլ չես

կարող, ակամայ չոքում ես. շուրջդ աղօթում են բարեպաշտ մարդիկ և զու զգում ես, որ նրանց հետ միասին մի ամբողջութիւն ես կազմում... Եթէ գիտենաս թէ այս աղքատ, հոգսերով լի, վիրաւոր մարդիկ ինչպիսի եռանդուն կերպով հետևում են աստուածպաշտութեան սրբազն խորհուրդներին, Բարեպաշտութիւնը երբէք էլ «հնացած բան», չէ, ինչպէս ու մանք կարծում են: Բարեպաշտութիւնը-բնութիւնն է. Նա կապուած է մարդու հետ և ինչպէս սէրն ու ատելութիւնը՝ մարդու յատկանիշն է կազմում:

Այսօր ժամերգութիւնից յետոյ, ճիւղերը բաժանելիս, ուսուցիչը, չդիտեմ ինչու, Բարբելի մօտից անցաւ առանց կանդ առնելու, իսկ նա երեսը շուռ տուեց և նոյնիսկ չնայեց ուսուցչի կողմբ: Նկատել եմ, որ աղջիկը այլկս կարդալու դրեեր չի վերցնում նրանից: Դէպի ինձ ուսուցիչը միատեսակ չէ լինում տրամադրուած: Երբեմն կարծես խռոված է լինում, իսկ այսօր մի գեղեցիկ ճիւղ ընծայեց: Օրհնած ճիւղերի փունջ տանտիկինը պահեց. ասում են նրա մէջ այնպիսի ոյժ է ծածկուած, որը կարողանում է ամառը ամպի դոռոցները հանդարտեցնել:

—Պահեմ արգե՞օք իմ ճիւղը! Մի՞թէ սոքա մարտիրոսութէան նամակներ են արդէն. կամ այս ճիւղը կպահպանի ինձ չար ոյժից: Ախ, Բարբել: Ի՞նչ կլինի, երբ ամառը երկնքի վրայ կայծակներ փայլատակեն:

Մարդկային սիրտը, բարեկամս, որպէս փոքրիկ կարմիր ճրադ, խուռար միջնադարից ողջոն է ուղարկում քեզ:

Թարգմ. ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

(Կը շարունակուի)

